

Հ Ա Յ Ե Կ Ե Ղ Ե Ց Ի

Մեր եկեղեցական վարչական գործերի վերաբերու-
թեամբ կարևորութիւն ունին Վեհափառ Հայրապետի, սոյն
համարում տպուած, շրջաբերական կոնդակները:

— Հոկտեմբերի 5-ի թ. 105 կոնդակը սահմանում է,
որ խնդրատուները ինչ գործի վերաբերութեամբ էլ լինի,
տեղական հոգևոր իշխանութեան միջոցով դիմեն բարձր
իշխանութեան, որպէս զի տեղական իշխանութիւնները
հնարաւորութիւն ունենան գործի վերաբերութեամբ իրանց
վարկումները կցել գործին:— Այս օրէնքով նախատեսուած
ձևն է և ուղիղ ճանապարհը, թէ գործավարութեան եղա-
նակը դիւրացնելու և թէ հոգևոր բարձր իշխանութեան
գործը թեթեացնելու, խնդիրը վճռելիս՝ աչքի առաջ ու-
նենալով և տեղական իշխանութեան բացատրութիւնն ու
եզրակացութիւնը:

— Հոկտեմբերի 21-ի թ. 218 կոնդակը սահմանում
է, որ ձեռագիր մատեանները, բացի նրանցից, որ սրբու-
թիւն են համարում, եկեղեցիներից ու վանքերից, ուր
անխնամ մնալով փտում ու ոչնչանում են, ժողովուրդն և
ուղարկուեն Մայր Աթոռի Մատենադարանը, նոյն վանքերի
և եկեղեցիների անունով ցուցակագրելու ու ապահով պա-
հելու համար:— Բացի այն, որ այդ ձեռագիրները ցիր և
ցան դրութեամբ անխնամ ոչնչանում են, մեր գրակա-
նութեան համար էլ թագուցեալ գանձ մնալով վրիպում
են բանասէրների ուսումնասիրութիւններից, մինչդեռ Մայր
Աթոռի Մատենադարանում այդ մատեանները թէ ապա-
հով պահպանութիւն կունենան և թէ ուսումնասիրութեան
նիւթ կդառնան մեր և օտարազգի բանասէրներին:

— Նոյեմբ. 4-ին թ. 359 կոնդակը սահմանում է, որ ա-
ռաջնորդները ներկայացնեն թեմական դպրանոցների,
ծխական դպրոցների և պետական ամեն տեսակի ուսում-
նարանների կրօնուսոյցների ցուցակը որոշելով, թէ իւրա-

քանչիւր կրօնուսոյց քանի՞ դպրոցներում և քանի՞ ժամ է դասաւանդուած. ինչ կրթական վարկ (ցենզ) ունի, որով արտօնուած է կրօն և հայ լեզու դասաւանդել, կազմել և դասագրքերի ցանկը, որ կիրառութեան մէջ են կրօնի համար, և մի մի օրինակ ուղարկել Հայրապետին:

Եթէ պրաւօսլաւ եկեղեցական վարչութիւնը անբաւարար է գտնում կրօնուսոյցների վերաբերմունքը դէպի իրանց պարտականութիւնը, և այս բացատրում է կրօնուսոյցների անբաւարար ռոճկով, որի պատճառով նրանք միշտ գերադասում են օրինակատարութիւնները և այդ պատրուակով խօսաւորում դասերից, մենք աւելի ևս անբաւարար պէտք է համարենք այդ կարևոր առարկաների դասաւանդութիւնը, նախ՝ որ մեր կրօնուսոյցները աւելի սակաւ ռոճիկ են ստանում, և երկրորդ՝ որ մերօնց կրթական վարկը (ցենզը) շատ անգամ ամենեին չի համապատասխանում իրանց ստանձնած պաշտօնին միջնակարգ դպրոցներում: Այս դեռ քիչ է. կրօնուսոյցները մի քանի դպրոցում են դաս ունենում և շատ անգամ օրական հինգ դաս:

Հանգուցեալ հայրապետը կրօնի դասաւանդութեան գործը կամեցաւ կարգի բերել, իւր կոնդակում սահմանելով ամեն մի կրօնուսուցչին շաբաթական ոչ աւելի քան 20 դաս. և որոշելով, որ պետական միջնակարգ դպրոցների ուսուցիչները լինին ճեմարանաւարտ, առնուազն՝ թեմական դպրանոցի ընթացաւարտ:

Բայց կեանքի մէջ այս կարգադրութիւնը պատշաճ գործադրութիւն չստացաւ. որովհետև հին կրօնուսոյցները զանազան պատրուակով մնացին իրանց պաշտօններում:

Ըստ մեզ, հարկաւոր է որոշել կրօնուսոյցների առանձին կարգ (շտատ), ազատելով նրանց ծխատիրական պարտաւորութիւններից. բայց դրա համար հարկաւոր է, որ կրօնուսոյցները իրանց ընտանիքը կառավարելու համար բաւարար ռոճիկ ստանան և, որպէս զի կրօնուսոյցները այս կամ այն պատրուակով չըխօսաւորեն դասերից, մատակարարել նրանց ռոճիկը տուած դասերի թուին համեմատ, ինչ-

պէս մտածուած է անել պրաւօսլաւ կրօնուսոյցների վերաբերութեամբ:

— Նոյեմբերի 11-ին թ. 406 կոնդակը սահմանում է սրբութիւնները անհատների բնակարաններից տեղափոխել եկեղեցի և նրանց ուխտի արդիւնքը, որ սեփականացնում էին անհատները, յատկացնել նոյն եկեղեցուն: Այս կարգադրութիւնը իրագործելը սրբան և նպատակայարմար նոյնքան և դժուարին է. նախ սեպհականութեան իրաւունքի խնդիր են մէջ բերում՝ սրբութիւնները իրանց տներում՝ շահագործողները, երկրորդ, թէև սրբութիւնը տեղափոխուի էլ եկեղեցի, բայց նախկին տէրերը միշտ էլ շահագործում են միամիտ ժողովրդի հաւատը, համոզելով, որ սրբութեան զօրութիւնը նախկին տեղումն է:

Հայրապետի կարգադրութիւնը սրբութիւնների վերաբերութեամբ ըստ ամենայնի արդարացի է. մնում է որ բանիմաց մարդիկ, և յատկապէս քահանաները, յայտնեն ու բացատրեն սրբութիւնների մասնաւոր տներում մնալու անտեղութիւնը և յորդորեն, որ այդ սրբութիւնները բերուեն իրանց պատշաճ տեղը—այն է եկեղեցին:

— Հոկտեմբերի 21-ին թ. 225 կոնդակը ի լրումն դպրոցների կառավարութեան համար տուած ժամանակաւոր կանոնների՝ սահմանում է վանական կալուածների կառավարութեան համար 7 յօդուածից բաղկացած ժամանակաւոր կանոնները կիրառութեան մէջ ընդունել:

Ի որտէ կը ցանկանայինք, որ թեմական խորհուրդները մեր ազգային եկեղեցական կեանքի մէջ նորութիւն լինելով, նոր շաւիղ բանային բարգաւաճման և բարուք տնտեսութեան:

Օտար եկեղեցիների ժամանակագրութեանը ընդարձակ տեղ տուինք Արարատում և կըշարդնակենք այդպէս. որովհետև այդտեղ մէջ են բերւում եկեղեցու ընդհանուր կարիքները և ցոյց տրւում բաւարարելու միջոցները:

Արարատի սոյն տետրի օտար եկեղեցիների ուսական բաժնում ընթերցողները կը տեսնեն թէ ուս հոգևորա-

կանութիւնն ու ժողովուրդը ինչպիսի կենդանի հետաքրքրութիւն են ցոյց տալիս գէպի եկեղեցին ու եկեղեցական գործերը. — ժողովներ են լինում մի կողմից քարոզչական գործը ոչ քրիստոնեայ հպատակների մէջ կանոնաւորելու և ընդարձակելու համար. միւս կողմից՝ ազանդաւորներին ուղղափառ հաւատին դարձնելու և մաքառելու այն դաւանութիւններին դէմ, որոնք յաւակնութիւն կունենան պրաւօսլաւներին դրաւելու: Ջանքեր են լինում մի կողմից՝ եկեղեցին պայծառացնելու ի մխիթարութիւն պրաւօսլաւներին և ի հրապոյր այլադաւանների, միւս կողմից եկեղեցին ազատելու պետական հովանաւորութիւնից և պետական հաստատութիւն լինելուց, զօրացնելով նրա մէջ ներքին ինքնավարութիւնը և ժողովրդական սգին:

Մի կողմից ուշագրութիւն է դարձնում կրօնի դասաւանդութեան վերայ. միւս կողմից ջանք է լինում կրօնուսոյցներին ապահովել բաւարար ռոճկով:

Հայ եկեղեցին անշուշտ հնարաւորութիւն չունի իւր գործունէութեան շրջանը ընդարձակել, հեթանոսների մէջ քարոզիչներ ուղարկել ևլն. բայց եկեղեցական համայնքը կարող է եկեղեցու պայծառութեան և բարւոք կառավարութեան համար մտածել և գործել: Կարող է դպրոցներում կրօնի դասաւանդութեան վերայ հսկել. մանաւանդ որ պետական դպրոցներում կրօնի դասը միանգամայն և մայրենի լեզուի դաս է: Տրտունջը հայ կրօնուսոյցների բացակայութիւններին և անպարտաճանաչութեան մասին պակաս չէ ռուս կրօնուսոյցներից: Մեր կրօնուսոյցներն էլ ժողովրդի օրինակատարութեան պատրուակով բացակայում են դասերից:

— Գրական և գիտական արտօնութիւնները —

— Միայն պրաւօսլաւ եկեղեցում չէ, ուր եկեղեցական գործերը կարգաւորելու համար ժողովներ են լինում. նոյնպիսի ժողովներ լինում են Եւրոպայում կաթոլիկ և բողոքական համայնքների մէջ:

Նրանք, որոնք կարծում են թէ հայ եկեղեցին պէտք է պարզութեան վերածել, վերանորոգել, կը տեսնեն, որ պարզութեան և վերանորոգութեան ենթարկուած բողոքական եկեղեցին իւր ժողովներում դառնապէս զանգա-

տւում է ժողովրդի անտարբերութեան մասին դէպի եկեղեցին. տասնեակ հազարաւոր բողոքականներ մեծ, վաճառաշահ քաղաքներում կրօնափոխ են լինում, պատճառներից մէկն էլ համարում է այն, որ բողոքական եկեղեցին շատ ցամաք է. ժողովրդին հրապուրող և հոգեկան մխիթարութիւն պատճառող բան քիչ ունի. մինչդեռ կաթոլիկ եկեղեցին իւր ճոխ հանդերձանքով, խորհրդաւոր և հանդիսաւոր արարողութիւններով, հրապուրիչ երգեցողութեամբ, ունի գրաւչութիւն. եկեղեցական վարչութիւնից դժգոհ կաթոլիկները անջատում են նրանից, բայց պահում են կաթոլիկ եկեղեցու ծէսերն ու արարողութիւնները. օրինակ հին-կաթոլիկներն ու լեհական հերձուած մարիավիաները:

Ուրեմն հայ ժողովրդի նկատուած անտարբերութեան պատճառը ոչ թէ եկեղեցական կարգերի ու արարողութիւնների հնացած լինելն է, այլ որ եկեղեցում ժամերգութիւնը կատարւում է անփութօրէն, չկայ կանոնաւոր երգեցողութիւն. — Բարի ցանկութիւն և հաստատուն կամք է հարկաւոր կանոնաւորել դպրոցներում, մանաւանդ ճեմարանում, եկեղեցական երգեցողութիւնը. և հետեւի, որ ժամերգութիւնը կատարուի երկիւղածութեամբ և լինի կանոնաւոր ու ներդաշնակ երգեցողութիւն: Մեր եկեղեցու հոգուն հակառակ չէ քարոզը. մեր եկեղեցու հոգուն հակառակ չէ ժամերգութեան ժամանակ նստելը: Ասիայում ապրելով, առիական սովորութեամբ մեր նախնիք եկեղեցում նստում էին ծաղապատիկ. մի անգամ որ ընդունուած է եկեղեցում նստելը, դժուար չէ յարմարութեան համար մտածելը. — կրկնում եմ, բարի ցանկութիւն և հաստատուն կամք է հարկաւոր, և եկեղեցին կունենայ իւր գրաւչութիւնը ժողովրդի առաջ և մենք քիչ պատճառ կունենանք ժողովրդի անտարբերութեան առիթով տրանջալու: Վարչական բարենորոգութեան համար հոգալն ու աշխատելը պարտք է. իսկ եկեղեցու աւանդութիւնները, ծէսերը, արարողութիւնները, խորհուրդները և հաւատալիքները անաղարտ պէտք է մնան:

Օրթոդոքս և կաթոլիկ և մինչև անգամ բողոքական եկեղեցին ջանալով բարեկարգել եկեղեցական գործերը, չեն համարձակուում գիպչել եկեղեցու հոգուն, որ սրբագործուած է նահատակների արիւնով:

— Յոյն օրթոդոքս եկեղեցին Թուրքիայում աշխատում է ի դէմս իւր պատրիարքի և սրբ. Սինօզի մի կողմից շրջաբերականով յորդորել իւր հօտին օգտուել զինուորագրութեան արտօնութիւնից, որ հաւատարացնում է ռայես համարուած օտարազգիներին տիրապետող մահմետականների հետ, միւս կողմից յոյն պատրիարքարանը պաշտպանելով իւր քաղաքական ներկայացուցչութեան իրաւունքը Բարձրագոյն Դրան առաջ, պահանջում է, որ քրիստոնեայ զինուորները ազատութիւն ունենան իրանց կրօնական պարտաւորութիւնները կատարել. ոչ որ իրաւունք չունենայ նրանց հաւատի վերայ բռնանալու. և, որպէս զի քրիստոնեայ զինուորները զերծ լինին ամեն տեսակ կրօնական հետամտութիւնից, առաջարկում է կազմել առանձին գունդ. չրվտարել քրիստոնեայ զինուորներին պետութեան հեռաւոր սահմանները, այլ պահել իրանց ծննդավայրերին մօտ. քրիստոնեայ զինուորները պէտք է ունենան ազօթատուն և քահանայ. քրիստոնեայ սպաները պէտք է վայելեն հաւասար իրաւունքներ մահմեդական սպաների հետ:

Հարկաւոր էր որ Կ. Պօլսոյ մեր պատրիարքարանն էլ հետեւէր յոյն պատրիարքարանին, բայց մեր պատրիարքարանը կազմալուծուած վիճակի մէջ կը գտնուի Ադանայի և շրջակայից մէջ տեղի ունեցած կոտորածների պատճառով:



Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ

Հոկտեմբերի 17-ին շաբաթ, սուրբ աւետարանչաց տօնին, Վեհափառ Հայրապետի անուանակոչութիւնը լինելով Մայր Տաճարը առանձին հանդիսաւորութիւն էր ստացել: Երեկոյեան նախատօնակին Վեհափառ Հայրապետը թափօրով եկեղեցի եկաւ: Շաբաթ օրը հանդիսաւոր սուրբ պատարագից յետոյ կատարուեց հայրապետական մաղթանք, որից յետոյ Տաճարում նորին Սրբութիւնը ընդունեց միաբանութեանը և ապա բազմելով գահի վերայ՝ նաև խուռն բազմութեան շնորհաւորութիւնը:

Այդ օրը թէ Վեհափառի անուանակոչութեան և թէ ենթադրուած եպիսկոպոսական ձեռնադրութեան համար Տիխիսից, Երևանից, Ալէքսանդրապօլից և այլ շրջակայ տեղերից բաւական բազմութիւն էր եկել Մայր Աթոռ — Մայր Աթոռի սեղանատանը հանդիսաւոր ճաշկերոյթ եղաւ, որին նախագահեց Վեհափառ Հայրապետը և իւր կենաց բաժակաճառին պատասխանելով՝ օրհնեց Միաբանութեանը, հայ ժողովրդին, բարեմաղթութիւններ արեց հայ եկեղեցւոյ և հայկական հաստատութիւնների յարատեւութեան ու բարգաւաճման համար: Սեղանին ներկայ էին հեռաւոր տեղերից եկած հիւրերը:

Շաբաթ լոյս կիրակէ ճրագալոյց կար Մայր Տաճարի բակում:

Հոկտեմբերի 25-ին Գիւտ Խաչի տօնին տեղի ունեցաւ եպիսկոպոսական ձեռնադրութիւն: Ձեռնադրելիներն էին Մշոյ Հայոց առաջնորդ Ներսէս, Աստրախանի Հայոց թեմի կառավարիչ Մխիթար, Սինօզի անդամ Մեսրոպ և Ատրպատականի Հայոց առաջնորդ Կարապետ ծայրագոյն վաղապետները:

Ձեռնադրելիները նախորդ օրը Իջման սուրբ սեղանի առաջ, ի ներկայութեան Սինօզի անդամների և խուռն բազմ

մութեան, ծնկաչոք կարգացին մեր եկեղեցու աւանդութիւններին, դաւանութեանը ու կարգերին հաւատարիմ և Մայր Աթոռի հայրապետական իշխանութեանը հնազանդմանու ուխտը և ստորագրուեցին: Յետոյ Սինոդի առաջանդամ Տ. Գէորգ Արքեպիսկոպոսը ընծայացուներին ներկայացրեց Վեհափառ Հայրապետին:

Երգման հետևեալ օրը կատարուեց եպիսկոպոսական ձեռնադրութիւնը մեծ հանդիսաւորութեամբ և խորհրդաւոր արարողութիւններով: պատարագիչն էր ինքն՝ Վեհափառ Հայրապետը, որ նորապսակ եպիսկոպոսներին օծելուց յետոյ ըստ պատշաճի քարոզ խօսեց:

Եպիսկոպոսական ձեռնադրութեան ժամանակ խուռն բազմութեան հետ կային օտարազգիներ էլ, որոնք հիացած էին ոչ միայն ձեռնադրութեան հանդիսաւորութեամբ, այլ և այն բանով, որ ձեռնադրութեան արարողութեան մի մասն վերաբերում էր հոգևորականութեան և ժողովրդի ներկայացուցչութեանը և ապացուցանում թէ ընտրական սկզբունքը որքան արմատացած և նուիրագործուած է մեր եկեղեցու մէջ:

Հարկ ենք համարում ներկայացնել Արարատի ընթերցողներին նորապսակ եպիսկոպոսներին և նրանց իրաւունքը եպիսկոպոսանալու վերաբերութեամբ:

Նորապսակ եպիսկոպոսներից Ա. Տ. Ներսէս, 62 տարեկան է, ուսած Մշոյ Ս. Կարապետի վանքում՝ այն ժամանակ՝ երբ Խրիմեանը Վարազից վանահայրութեան պաշտօնով տեղափոխուեց Մշոյ Ս. Կարապետի վանքը և հաստատեց այնտեղ դպրոց ու տպարան:

Ներսէս եպիսկոպոսը գործել է Մշոյ ժողովրդի մէջ և կրել է այն բոլոր տառապանքը, որ վիճակուած էր հային Տաճկաստանում: Աքսորուեց Երուսաղէմ և երկար ժամանակ մնաց Երուսաղէմի արքայապայրում, մինչև 1908 թիւը. Տաճկաստանի սահմանադրութիւնը ի միջի շատ արտորականներին՝ ազատութիւն բերեց Ներսէս Սրբազանին էլ: Նա Երուսաղէմից վերադառնալով Կ. Պօլիս, կաթողիկոսական ընտրութեան ժամանակ եկաւ Մայր Աթոռս և

իբրև Մշոյ առաջնորդ մասնակցեց կաթուղիկոսական ընտրութեան համազգային ժողովին:

Իւր վիճակի ժողովրդի ընտրութեան հանրագրով և պատրիարքարանի վկայականով նա ձեռնադրուեց Մշոյ եպիսկոպոս:

Բ. Տ. Մխիթար ծնուած 1864 թ. ուրեմն 45 տարեկան: Ուսել է Մայր Աթոռիս ձեմարանում և Ներսիսեան դպրոցի ընթացաւարտ է: Եղել է ուսուցիչ հայ ծխ. դպրոցներում: 1893 թուին ընդունելով հոգևոր կոչումն և ձեռնադրուելով վարդապետ պատուով վարել է զանազան պաշտօններ: Եղել է առաջնորդական փոխանորդ Նոր Նախիջևանում՝ երկար ժամանակ և Ալէքսանդրոպօլում: Հանգուցեալ Մկրտիչ Ա. Կաթուղիկոսի առաջարկութեամբ հաստատուել է Սինօղի անդամ, և 1906 թ. հանգուցեալ Արիստակէս Արքեպիսկոպոսի մահից յետոյ, ընտրուելով Աօտրախանի հայոց թեմի առաջնորդ՝ 1908 թուին կաթուղիկոսական տեղապահ Տ. Գէորգ Արքեպիսկոպոսի առաջարկութեամբ հաստատուել է թեմի կառավարիչ:

Անի գրաւոր վաստակներ էլ, որոնց մէջ կարևոր տեղ է բռնում Պարրարի «Քրիստոնէութեան Արշալուսին» գրքի թարգմանութիւնը որ տպուած է Մայր Աթոռում:

Գ. Տ. Մետրոպ Տէր Մովսէսեան ծնուած 1865 թ. ուրեմն 44 տարեկան. ընթացաւարտ Ներսիսեան դպրոցի Գիմնագիական հասունութեան վկայական ստանալուց յետոյ մտել է Դորպատի համալսարանը և աւարտել ոսկի շքադրամով: Եղել է ուսուցիչ ձեմարանում: 1893 թ. ընդունելով հոգևոր կոչումն ձեռնադրուեցաւ վարդապետ, Հանգ. Մկրտիչ Կաթուղիկոսի ինչպէս և արգի Տ. Մատթէոս Բ. կաթուղիկոսի հրաւիրակներինց մէկը եղաւ Միքանի անդամ եղել է Եւրոպայում թէ գիտնական նպատակով գումարումներին ներկայ լինելու և թէ հայ ձեռագրերի ցուցակը կազմելու համար: Վարել է կարճ ժամանակով Երևանի թեմական տեսչի, Նուշու թեմական դպրոցի տեսչի,

Շամախու Կոնսիստորիայի նախանդամի պաշտօնը, որից յետոյ գնալով Ս. Պետերբուրգ՝ պատրաստուեց ու համալսարանում հրապարակով պաշտպանելով իւր գիտերտացիան, արժանացաւ հայ գրականութեան մագիստրոսի գիտնական աստիճանին: 1906⁷ թ. ձեւարանի տեսուչ էր:

Մեսրոպ սրբազանը ունի բազմաթիւ գրական, գիտական վաստակներ թէ պարբերական թերթերում և թէ առանձին գրքերով. բայց նրա ամենամեծ վաստակը հայ ձեռագրերի ցուցակը կը լինի, որ համարեւ պատրաստ է և նրա երկարամեայ աշխատանքի արդիւնքն է:

1908 թուին Տ. Մեսրոպ եպիսկոպոսը Կաթուղիկոսական Տեղապահ Տ. Գէորգ արքեպիսկոպոսի առաջարկութեամբ հաստատուեց Սինօզի անդամ Ըստ օրինի՝ (հատ. XI, մ. I, յօդ. 1139 հրատ. 1896 թուականի) Սինօզի ութ անդամներից չորսը պէտք է լինեն արքեպիսկոպոս կամ եպիսկոպոս. մինչդեռ Սինօզում միայն երեք արքեպիսկոպոսներ կային: Իւր ուսումնական վարկը, վարած պաշտօնները և դրաւոր վաստակները բաւական էին, որ Մեսրոպ սրբազանը եպիսկոպոս դարձած լինէր վաղուց, իսկ Սինօզի անդամ լինելը արդէն իրաւունք էր տալիս նրան եպիսկոպոսանալ:

Դ. Տ. Կարապետ, ծնուած 1865 թուին, ընթացաւարտ Մայր Աթոռի ձեւարանի լսարանների և ուսումն կատարելագործելով գերմանական համալսարաններում, ստացել է դոկտորի և լիցենցիատի գիտնական կոչումները: 1894 թուին ձեռնադրուել է վարդապետ: 1894 թուից մինչև 1903, և 1905⁶ թիւը ձեւարանում վարել է ուսուցչի, տեսչի օգնականի և տեսչի պաշտօնները. եղել է և Արարատի խմբագիր: 1903-5 թ. Երևանի — թեմակալի տեղակալ էր. 1907 թուին Ատրպատականի Հայոց ընտրութեամբ նշանակուեց Ատրպատականի առաջնորդ:

Ունի բազմաթիւ հրապարակախօսական և գիտական վաստակներ տպուած՝ պարբերական թերթերում և առանձին գրքերով:

Տ. Կարապետի ուսումնական վարկը, վարած պաշտօն-

ները, գրաւոր վաստակները և ներկայ առաջնորդական պաշտօնը իրաւունք են տալիս նրան ունենալ եպիսկոպոսական աստիճան:

— Նորապսակ եպիսկոպոսների այրական հասակը, վարած պաշտօնների փորձառութիւնը և գրաւոր վաստակները իրաւունք են տալիս մեզ ոչ միայն յուսալ այլ և հաւատալ, որ նրանք եկեղեցու փառքը կը մեծացնեն ըստ ամենայնի իրանց կոչմանը արժանի գործերով: «Աւժժ շատ է տրուած, նրանից շատ էլ կը պահանջուի»:

Նորապսակ եպիսկոպոսները իրանց առաջին ս. պատարագները մատուցանելով իջման սուրբ սեղանի վերայ որպէս հաստատութիւն երդման որ նոյն ս. սեղանի առաջ կատարել էին նախ քան ձեռնադրութիւնը, մեկնեցին Մայր Աթոռիցս իրանց թեմերը գնալու, Մշոյ առաջնորդ Տ. Ներսէս սրբազանը նոյեմբերի 1-ին Տ. Կարապետ Սրբազանը՝ 6-ին և Տ. Մխիթար Սրբազանը՝ 9-ին:

— Նոյեմբերի 2-ին Սինօզի անդամ Տ. Մեսրոպ եպիսկոպոսը երկու շաբաթ ժամանակով գնաց Տփլիս Մայր Աթոռիս տնտեսական կարևոր գործերի համար խորհրդակցութիւններ կատարելու և հետևանքը Վեհափառ Հայրապետին ու Սինօզին զեկույցանելու համար:

— Նոյեմբերի 6-ին Սինօզի անդամ Տ. Բարգէն վարդապետը տասն օրով մեկնեց Տփլիս, տեղւոյն Կոնսիստորիայի անդամ Տ. Եփրեմ վարդապետի հետ Բօլնիսի ս. Գէորգ ուխտատեղին գնալով՝ թէ ուխտի արդիւնքին հսկելու և թէ ուխտատեղու մասին Սինօզին զեկույցումն ներկայացնելու:

— Սինօզի անդամ Տ. Մատթէոս վարդապետը քննական գործով հսկտեմբերի 20-ին գնացած լինելով Երևան, նոյեմբերի 2-ին վերադարձաւ Մայր Աթոռս:

— Սեպտեմբերի 26-ին Ս. Գէորգի տօնին ձեմարանի երեսուն և հինգերորդ տարեդարձի օրը սուրբ պատարագից յետոյ ձեմարանի հիմնադիր հանգուցեալ Տ.

Գէորգ Գ. կաթուղիկոսի գերեզմանի վերայ հանգստեան պաշտօն կատարուեց, որին ներկայ էր ազգիս Վեհափառ Հայրապետը:

Հոգեհանգստից յետոյ ձեմարանի հիւսիսային գաւթում տեղի ունեցաւ դպրոցական հանդէսը, որին նախագահում էր Նորին Սրբութիւնը:

Բաւական ուխտաւորներ Մուղնւոյ Ս. Գէորգայ վանքից շտապել էին տեսնելու դպրոցական հանդէսը, որի ժամանակ աշակերտները երգեցին մի քանի ժողովրդական երգեր. տեսչի պաշտօնակատարը կարգաց ճեմարանական տարուայ ուսումնական և տնտեսական գործառութեան մասին տեսութիւն. իսկ Վեհափառ Հայրապետը խրատական և յորդորական ատենաբանութեամբ փակեց հանդէսը:

— Սինօղի աւագ անդամ Տ. Գէորգ արքեպիսկոպոսը Վեհափառ Հայրապետի, իւր անունով տուած, կոնդակի համեմատ հսկտեմբերի 18-ին Տպարանի դահլիճում միաբանական ժողով գումարեց: Վեհափառ Հայրապետը իւր կոնդակի մէջ սրօշել էր օրակարգի խնդիրները ըստ այսմ:

«Ա. Մայր Աթոռոյ միաբանութեան կազմական կանոնագիր մը ծրագրել, որու մէջ սահմանուած պէտք է ըլլայ 1. միաբանութեան ընդհանրապէս և անոր իւրաքանչիւր անդամին մասնաւորապէս հոգեւորական և այլ միաբանական պարտաւորութիւններն և պարտականութիւններն 2. Միաբան ընդունելու եղանակը, 3. վարձատրութեան աստիճանները, 4. Յանցապարտ և պաշտօնախոյս միաբանից հոգեւորապէս պատժայ աստիճաններն և ի հարկին՝ միաբանական ուխտէն արտաքսելու տնօրէնութիւնը ևլն:

Բ. Ս. Էջմիածնի Մայր Տաճարի լուսարարպետն, անոր օգնականը, Մայր Աթոռոյ վանական Կառավարութեան անդամներն և հիւրընկալն ընտրել և 1. անոնց պաշտօնը, պարտաւորութիւնը, իրաւունքն և պատասխանատուութիւնն և պաշտօնավարութեան շրջանը սահմանել և 2. թէ Մայր Տաճարին և թէ վանական Կառավարութեան տարեկան

եղև մտացոյցերն (պիւտօէներն) պատրաստել:

Գ. Մայր Աթոռոյ «Արարատ» պաշտօնաթերթի խմբագրութիւնը, Մատենադարանը, Թանգարանն և Տպարանը մէկ մէկ պատասխանատու տեսչի յանձնել՝ անոնց պարտականութիւնը որոշող պայմաններով: Կազմել և հինգ կամ վեց անձերէ խառն յանձնախումբ մը ի հարկին անոնց աջակցելու և միաբանից և այլոց գրական վաստակներու գնահատումը կատարելու պաշտօնով: «Արարատ» պաշտօնաթերթի, տպարանի, մատենադարանի և Թանգարանի տարեկան եղև մտացոյցները (պիւտօէների) սահմանել:

Դ. Մայր Աթոռոյ միաբանութեան սեղանատան խընդիրը նկատողութեան առնել և միաբանական ուխտին պատուաբեր և խնայողական դրութիւն մը հաստատել: Միաբանական ընդհանուր ժողովը վերոյթուեալ խնդրոց նկատման մէջ ամենայն հայոց Հայրապետին կանոնական և օրինական իրաւունքները միշտ ի նկատի պէտք է ունենայ: Ժողովը կազմեց հետեւեալ արձանագրութիւնը:

18-ին հոկտեմբերի 1909 ամի Ս. Էջմիածին:

Ազգիս վեհափառ Հայրապետի հոկտեմբերի 15-ից թ. 153, կոնդակի համաձայն՝ նախագահութեամբ Տ. Գէորգ սրբազան արքեպիսկոպոսի տեղի ունեցաւ միաբանական ժողով Մայր-Աթոռի ներքին հաստատութիւնների ղեկավարներ, «Արարատ»-ի խմբագիր, միաբանական կանոնագրութիւն մշակող հինգ հոգուց բաղկացած յանձնաժողով և միաբանների ու այլոց Մայր-Աթոռում տպագրուելիք գրական վաստակները գնահատող մի յանձնաժողով ընտրելու համար: Քարտուղար ընտրուեց Տ. Իսահակ վարդապետը: Ժողովի էին հրաւիրուած 39 հոգի, ներկայ էին 30 հոգի:

Միաբանական ժողովը որոշեց ընտրել այն պաշտօնեաներին, որոնց տեղը բաց է կամ պաշտօնեաները հրատարուել են: Գաղտնի քուէարկութեամբ ընտրուեցին՝

1. Հինգ հոգուց բաղկացած՝ վանական կանոնադրութիւն մշակող յանձնաժողովը՝ քուէարկուած էին 25 հոգի, ձեռնպահ էին 5 հոգի։—

- ա. Տ. Մատթէոս վարդապետ 20 ձայնով
- բ. Տ. Իսահակ վարդապետ 18 »
- գ. Տ. Բարգէն վարդապետ 16 »
- դ. Տ. Խորէն վ. Մուրադբէգեան 20 »
- ե. ե. Դպիր Գալուստ Տէր-Մկրտչեանց 16 »

2. Արարատի իմբագիր ընտրուեց Տ. Յուսիկ արքեպիսկոպոսը 18 ձայնով, այս ընտրութեանը քուէարկուած էին 24 հոգի, վեցը ձեռնպահ մնացին, որոնցից Տ. Երուանդ վարդապետը բացարձակ հրաժարուեց քուէարկելուց։

3. Տպարանի Տեսուչ ընտրուեց Տ. Իսահակ վարդապետը 19 ձայնով, այս ընտրութեանը քուէարկուած էին 27 հոգի

Վանական կառավարութեան նախագահ ընտրուեց Տ. Մատթէոս վարդապետը 18 ձայնով, վանական կառավարութեան անդամ ընտրուեց Տ. Խորէն վարդապետ Մուրադբէգեանը 20 ձայնով։

Ուստի կազմուեց սոյն արձանագրութիւնը։

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ

Հայ եկեղեցու վիճակը Տաճկաստանում շատ տխուր է։ Ադանայի կոտորածը, նոյն տեղում պատահած աղէտը հեղեղի երեսից, Կիլիկիայի սրբազան կաթողիկոսի հրաժարականը և նրա պատճառները, Երուսաղէմի պատրիարքարանի խառնակ վիճակը և Ս. Յակոբեանց վանքում տեղի ունեցող տխուր դէպքերը գալիս են հաստատելու, որ օսմանեան կայսրութեան սահմանադրական կառավարութեան ժամանակ էլ հայերին վիճակուած չէ լաւ օր տեսնել։

Կ. Պօլսոյ նորընտիր պատրիարք Տ. Եղիշէ Սրբազանը հարկադրուեց հրաժական ներկայացնել թուրքաց կառավարութեանը։ Նա ինդրեց թուրքաց կառավարութիւնից

գատապարտել Ագանայի կոտորածի յանցաւորներին, բայց այս խնդիրը ոչ միայն շարգուեց, այլ և յողորարութիւն եղաւ նրան, որ ինքն, որպէս հոգևորական՝ հոգևոր գործերով պարապի. այս ազգարարութեամբ ոչնչութեան էին գատապարտուում այն բոլոր արտօնութիւնները, որ պատրիարքները, որպէս ազգապետ, ունեցել են:

Սրբազան պատրիարքի հրաժարականը քանի որ կապուած է կառավարութեան ազգարարութեան հետ, սրով ոչնչացւում են պատրիարքի ազգապետութեան իրաւունքները և պատրիարքարանի արտօնութիւնները, բնական է որ ընդհանուր հետաքրքրութիւն պէտք է շարժէր: Եւ այդ խնդրով հետաքրքրած են ոչ միայն հայերը, այլ և օտարազգիք:

Այդ հրաժարականը ազգի մէջ երկու հոսանք է առաջ բերել. մէկը, աւելի զօրեղը և ժողովրդականը համակիր է պատրիարքին. և բազմաստորագիր դիմումներով ոչ միայն բաջալերում է պատրիարքին, այլ և առաջարկում է որ քաղաքական և կրօնական ժողովներն էլ հրաժարուեն. միւսը, թուով աւելի նուազը, պատրիարքի հրաժարականը համարում է վաղաժամ, յուսալով որ պատրիարքը պաշտօնի մէջ մնալով՝ կարող կը լինէր իւր արդարացի պահանջները աւելի լսելի անել կառավարութեան առաջ:

Պատրիարքի հրաժարականին համակիրները կարծում են, որ թուրքաց պետութիւնը որպէս խալիֆայութիւն — աստուածպետական — կառավարութիւն՝ կըզգուշանայ կրօնական հակաշարժումն առաջ բերել և կը հեռացնի պատրիարքի հրաժարականը առաջ բերող պատճառները. իսկ նրանք, որոնք կարծում են, թէ պատրիարքի հրաժարականը վաղաժամ է, առարկում են, քանի որ Օսմանեան կայսրութիւնը սահմանադրական կառավարութեան ձևն ընդունեց և բոլոր հպատակներին հաւասար քաղաքացիութեան իրաւունքի պատրուակով կամենում է ջնջել առանձին արտօնութիւնները, — ոչ միայն չի հեռացնի պատրիարքի հրաժարականի պատճառները, այլ առաւել ևս կը սաստկացնի, որ բոլորովին ոչնչացնի պատրիարքարանների արտօնութիւններն ու իրաւունքները:

— Ըստ մեզ, վերջիններին առարկութիւնները աւելի են համապատասխանում իրականութեան և թէև պատրիարքի հրաժարականի վերայ ամիսներ են անցնում, բայց Բարձրագոյն Դուռը դեռ ոչ մի զիջումն չէ անում:

Դնում ենք «Դէյլի Նիւս» անգլիական ազատական թերթի հետևեալ վարկումները պատրիարքի հրաժարականի մասին, արտատպելով «Մշակից»:

«Թիւրք կառավարութեան հայերուն հետ ունեցած դժուարութիւնը շատ ծանրակշիռ դարձաւ: Ատիկա ծագեցաւ անցեալ ապրիլի մէջ Կիլիկիա կատարուած ջարդերէն: Հայոց պատրիարքը Բ. Դրան պնդեց, թէ Ադանա զրկուած յանձնախումբերն իրենց պարտքը գոհացուցիչ կերպով չկատարեցին: Առաջին յանձնախումբը գայթակղութենէ զատ բան մը չէր: Հրապարակապէս կըսուի, թէ էն մեծ յանցանքներէն մէկը նպաստ բաշխելու գործին մէջ գործուեցաւ: Պօլսէն զրկուած երկրորդ յանձնախումբը լաւագոյն էր, բայց ցաւալի է, որ անոր հայ անդամին տեղեկագիրը դեռ չհրատարակուեցաւ:

«Պատրիարքին էական գանգատն այն է, թէ ջարդերու իրական դրդիչները չպատժուեցան, թէ Թիւրքիոյ ամօթ և նախատինք բերող ջարդին հեղինակները արտօնուեցան փախչիլ:

«Կառավարութիւնը նախ շատ կարևորութիւն չտուաւ այս հրաժարականին, ըսաւ իրեն ազուոր բառեր, բայց չխոստացաւ գոհացում մը:

«Կրնանք ըսել, որ պատրիարքը նեցուկը կը վայելէ բոլոր իր ժողովուրդին: Եթէ, հետևաբար, կառավարութիւնը չուզէ փոխել իր բռնած ներկայ դիրքը անոր նկատմամբ, այնպիսի կացութեան մը առջև պիտի գանուինք, որ պիտի փորձի ենթարկէ այն խնդիրը, թէ երիտասարդ թիւրքերը կարող են ընդունիլ և պաշտպանել իրականապէս կրօնական հաւասարութիւնը: Եթէ հազարաւոր հայեր պիտի ջարդուին և սփրագործները չպիտի պատժուեն, անօգուտ բան է հաւասարութիւն քարոզել:

«Եթէ Թիւրքիա կուզէ քաղաքակրթեալ ազգերու կարգն անցնիլ, անոր պէտք է հայոց խելքը և հայոց աշխատասիրութիւնը: Բայց կառավարութեան դժբախտ ընթացքը կորսնցնել կուտայ կոր հայերուն համակրութիւնը»:

Խօսելով նաև պատրիարքական իրաւունքներու խընդրոյն վրայ, «Դէյլի Նիւս» քրիստոնեաներուն դատը կը պաշտպանէ առանց վերապահութեան և կըսէ.

«Եկեղեցիներն ունին կատարեալ կազմակերպութիւն մը, որուն գլուխը կը գտնուին պատրիարքները, որոնք կըրցան, շնորհիւ այդ կազմակերպութեան, եպարքոսներուն և երբեմն մինչև իսկ սուլթաններուն իմացնել իրենց ժողովուրդին կրած հարստահարութիւնները: Այս ամենը, — կըսեն ազգայնամոլ երիտասարդ-թիւրքերը, — պէտք է դադրի: Ամեն մարդ օսմանցի է, և իր մէքուսը կրնայ կառավարութեան իմաց տալ անիրաւութիւնները. եկեղեցիներու պաշտօնատարներն իրաւունք չունին միջամտելու: Այս քաղաքականութիւնն անարդար և անխոհեմ է, որովհետև ոչ մէկ մահմեդական մեքուս իր մէկ կրօնակցին քրիստոնեաներու դէմ գործած անիրաւութիւնները կառավարութեան կը հաղօրդէ, անխոհեմ, որովհետև արդար կառավարութիւն մը պատրիարքներէն աւելի ուղիղ և ճիշդ տեղեկութիւն կրնայ ստանալ, քան ուրիշ ոեւէ ազգիւրէ»:

«Աւելցնենք նաև թէ բոլորովին անբանաւոր է ենթագրել, թէ քրիստոնեաները պիտի երբէք հրաժարին իրենց պատրիարքական առանձնաշնորհներէն, որոնց շնորհիւ կըրցան մէկտեղ ապրիլ մինչև հիմայ»:

Իրերի այս դրութեան մէջ, հրաժարուեց ազգային ժողովի ընտրած պատուիրակութիւնը, որ պէտք է գնար Բարձրագոյն Դուռը, պատրիարքի հրաժարականի առիթները բառնալու համար բանակցելու, հրաժարական տուին կենդրոնական վարչութեան կրօնական, և քաղաքական ժողովները:

Իւզանդիոնում կարդում ենք, որ հօկտեմբերի 16-ին

գումարում է Ազգային Երեսփոխանական ժողովը դաւն-
փակչ Ներկայ չէ եղել Սրբազան պատրիարքը. ա. ատե-
նապետ Մ. Չէրազ բանալով ժողովը և յայտնելով, որ
իրանց պաշտօնը արդէն լրացած է, հրաւիրում է երես-
փոխաններին երիցագոյն Յ. Գորեան էֆէնդուն ատենա-
պետելու և կրտսեր երեսփոխան Վ. Թէքեան էֆէնդուն՝
ատենադպրի պաշտօնը կատարելու:

Ներկայ երեսփոխանների թիւը եղել է 76, որոնցից
2-ը ձեռնպահ մնալով 74-ից 48-ի քուէով բժ. Տիգրան
Բէյ Աջէմեան հռչակուել է առաջին ատենապետ, իսկ երկ-
րորդ և երրորդ ատենապետների ընտրութիւնը, ժամա-
նակի սղութեան պատճառով, յետաձգուել է:

Ատենադպիր ընտրուել են

Վ. Թէքեան էֆէնդի 69 քուէով

Ս. Սուին » 63 »

Ե. Օդեան » 35 »

Գորեան էֆէնդին նորընտիր դիւանը պաշտօնի հրա-
ւիրելով շնորհակալութիւն է յայտնում հրաժարուած դի-
ւանին, որին ձայնակցում է ժողովը:

Ժողովը անցնում է օրակարգի խնդիրներին նոր ա-
տենապետ դորտոր Աջէմեանի ղեկավարութեամբ: Նախորդ
ժողովում ընտրուած էր մի պատուիրակութիւն, Բարձրա-
գոյն Գուռը գնալու, պատրիարքի հրաժարականի առի-
թով բանակցելու համար: Ընտրուած պատուիրակները հրա-
ժարուած լինելով, խնդիր է ծագում նոր պատուիրակներ
ընտրել. թէ քաղաքական ժողովի հրաժարականի խնդրով
զբաղուել. որոշում է քաղաքական ժողովի հրաժարակա-
նին առաջնութիւն տալ և ազգային ժողովը 42 քուէով
ընդունում է քաղաքական ժողովի հրաժարականը:

«Մշակի № 245 Կ. Պոլսոյ թղթակիցը յայտնելով որ
հոկտեմբերի 23-ին Ազգային ժողովը վերահաստատել է կրօ-
նական ժողովը, ֆաղաքական ժողովի անդամների ընտ-
րութեան համար գրում է:

Նոր քաղ. ժողովը կազմուած է բոլորովին նոր մար-
դերով. Մ. Չերազի անդամակցութեան հետ ունինք բժիշկ-
ներ, իրաւաբաններ, վաճառականներ, ուսուցիչներ, ըն-
դամենը 14 հոգի: Անուններու այդ ցանկը պիտի ցոյց
տրուի պատրիարքին, որ, իր կարգին, պիտի դրկէ Բ. Դու-
ռը՝ վաւերացումի համար: Այդ գործողութիւնը կը կա-
տարուի այսօր կամ վաղը, բնաւ տարակոյս չկայ, որ հաս-
տատութիւնը տեղի կունենայ անմիջապէս, և նոր քաղ.
ժողովը, հին կրօնականին հետ, կը ձեռնարկէ իր պաշտօնին:

Թէ ինչ պիտի ընէ վարչութիւնը, կանգնած իր նա-
խորդ Քաղ. ժողովի անդամներու վրայ, ահաւասիկ բուն
հարցը: Երկու ճամբայ կայ, կամ՝ այն է որ քաղելով իր
նախորդի ուղղութեանը վրայ՝ պիտի աշխատի ընել ինչ որ
չյաջողեցաւ ձեռք բերել, գտնէ մինչև իր վերջին օրը, իր
նախորդը, և կամ՝ բոլորովին նոր ուղղութիւնով մը պիտի
գործէ, անկարևոր դատելով պատրիարքին բողոքները: Եթէ
առաջին գծին վրայ շարունակէ իր ճամբան, չուտով պէտք է
բերէ իր հրաժարականը, պատճառաբանելով թէ իր միջոց-
ները սպառած են: Իսկ եթէ երկրորդ գծով քալէ, հարկ
է, որ կանխաւ ուրանայ պաշտօնական բողոքագրին պա-
րունակութիւնը և պատրիարքը իր աթոռը դարձնէ նոր
ճամբով մը, գալ յայտարարելու թէ ինքը մեծապէս սխա-
լած է, մեղանշած իսկ է, որովհետև Կիլիկիոյ մէջ արդա-
րադատութիւնը իր գործը տեսած է կատարեալ ճշտու-
թեամբ, թէ Ձէվադը անմեղ է, Արդիւ-Կադէրը՝ արդար
է, կախաղան բարձրացած հայերը իրաւապէս նետուեցան
լպրծուն չուաններու մէջ՝ իրենց մեղքերը քաւելու:

Կրօն. ժողովը, որ հաստատուեցաւ իր պաշտօնին մէջ,
ինչ պիտի ըսէ այսօր: Երբ ասկէ առաջ հրաժարական բե-
րաւ, առարկելով թէ իր գործելու միջոցները սպառած
են, Ազգ. ժողովը պատշաճ դատեց, որ ետ առնէ իր հրա-
ժարականը և գործակցի քաղ. ժողովի հետ: Ու երբ հրա-
ւիրուած էր մասնակցելու Քաղ. ժողովի՝ վարչութեան խառն
ժողով գումարելու, յանձն առած չէր իր օժանդակութիւնը
տալու Քաղ. ժողովի, առարկելով թէ ինքը չի կրնար նիս-

տեր գումարել առանց սրբազան նախագահի: Հիմա կը մնայ տեսնել թէ պիտի գործակցի նոր վարչութեան՝ քանի որ նոյն պատճառները բարձուած չեն:

Պատրիարքի հրատարականի խնդիրը լուծուած չէ. և այստեղ մէջ ենք բերում Մշակի № 248-ից արտատպելով Նորին Սրբազնութեան և արքարադատութեան ու դաւանութիւնների մինիստրի հետեւեալ գրութիւնները:

«Արդէն ծանօթ պատճառները և հանգամանքները դժուարին և, աւելի լաւ է ասել, անկարելի դարձրին կատարելու իմ պաշտօնը որպէս Կ. Պօլսի հայոց պատրիարք: մի պաշտօն, որ վստահացված է ինձ: Ռուսի ես խնդրեցի ձեր գերազանցութիւնից ինձ համարել հրատարակել 1325 օգոստոսի 25 թւակիր թակրիրով, և ես հեռացայ իմ բնակարանը:

«Ինձ ծանուցվեց մի թէղքէրէով, որ կրում էր 1325 լամազան 27 թիւը և 2828 համարը, թէ Բ. Գուռը չէ քնդունել իմ հրատարականը և թէ պէտք է որ ես շարունակեմ իմ պաշտօնը:

«Ճիշտ է, որ այդ հրաւերը շնորհակալութիւնների արժանի է, բայց դժբախտաբար այդ պատասխանը համոզեցուցիչ չէ երևում. ես գտնվում էի մի վատթար կացութեան մէջ և ես ստիպուած եղայ հայոց Ազգային ժողովի որոշումն ձեռք բերել. որպէսզի գիտենամ, թէ ինչ ընթացքի պէտք է հետեւեմ:

«Այդ ժողովը մի քանի հրահանգներ տուեց պատրիարքարանի խառն խորհրդին. բայց այդ խորհրդի աշխարհական անդամները տուած լինելով իրանց հրատարականը, Ազգային ժողովը որոշեց պատրիարքարանի վարչական խորհրդի վերընտրութիւն կատարել՝ ներկայացնելու մանրամասնաբար Բ. Գրանը այն հանգամանքները, որոնք առաջացրին իմ հրատարականը, և այն բոլոր քայլերի ու միջնորդութիւնների շարժառիթները հեղինակաւոր ատեանի առաջ՝ մի վճիռ ձեռք բերելու համար:

«Վերջապէս ձեռք զարկին ընտրութիւններին, և ներփակեալ թերթի մէջ յիշված անձինք անուանվեցին պատրիարքարանի աշխարհական խորհրդի անդամներ:

«Ուստի մենք ձեզ խնդրում ենք բարեհաճել հաստատելու այդ անձանց, որոնք ընտրվել են, որպէսզի խսկոյն սկսեն կատարել իրանց պաշտօնը»

«Հայոց պատրիարք, հրաժարեալ»:

Ահա միւս կողմից արդարադատութեան և դաւանութիւնների մինտարի թէզզէրէն հայոց պատրիարքին:

«Ի պատասխան մեր թէզզէրէին, — որով, բացատրութիւններ և հաւաստիացումներ տալով այն հանգամանքների և պատճառների վերաբերմամբ, որոնք պատմված էին դրանից առաջ մեծ-վէզիրութեանը ներկայացված երկու թէզզէրէիների մէջ ձեր պատրիարքական պաշտօնից հրաժարականի հետ միասին, մենք ձեզ խնդրեցինք առաջվան պէս շարունակել ձեր պաշտօնավարութիւնը, — ես ստացայ մի բարձր թակրիք, որով ծանուցանելով տրված բացատրութիւնների և յայտարարութիւնների անբաւարարութիւնը, դուք հաղորդում էք սովորութեան և կանոնադրութեան համաձայն ընտրված անձանց ցուցակը պատրիարքարանի այն աշխարհական անդամներին փոխարինելու համար, որոնք տուել են իրանց հրաժարականը և դուք խնդրում էք հաստատել նրանց ընտրութիւնը»:

«Պարզաբանելով և հաւաստիացումներ տալով առաջին թէզզէրէի մէջ, որ վերանորոգվեց բերանացի կերպով, ցանկալի լիակատարութեամբ, հրաժարականի պատճառ դարձող գրութեան վերաբերմամբ, մենք սպասում էինք այդ բարի ցանկութեան փոխարէն երախտադիտութիւն, որպէս գրաւական կառավարութեան բարի և արդար տրամադրութիւնների, և ձեզ մատնացոյց անելով մասնաւորապէս դրա անհրաժեշտութիւնը, մենք ձեզ խնդրեցինք շարունակելու ձեր բարձր պաշտօնը, որովհետև կառավարութիւնը իր համակրութիւններն ու վստահութիւնն է տածում դէպի ձեր բարձր սրբազնութիւնը: Սակայն ձեր թակրիքի ոճը և բովանդակութիւնը համապատասխան չեն այդ նախատեսութիւններին և բնականաբար մեզ վիշտ են պատճառում: Յուսալով որ դուք կը կամենաք, ձեզ յատուկ խոհեմութեամբ և փորձառու-

թեամբ, կրկին ուշադրութեան առնել նախկին բացատրութիւնները և ընթացիկ բանակցութիւնները, և վերջ դնել գոյութիւն ունեցող թիւրիմացութիւններին, ես յայնուամեմ, որ աշխարհական խորհրդի նոր անդամների ընտրութիւնը, որոնց անունները դրուած են ներփակեալ թերթի մէջ և որոնց պարտաւորութիւնները յիշատակուած են ձեր պատրիարքարանի կանոնադրութեան մէջ, վաւերացված է:

«Դաւանութիւնների և արդարագատութեան մինխտր նէջմէտդին»:

«Բիւզանդիոնից» քաղում ենք.

ԸՆԵՐՈՒՐԻԱՆ Քաղաք. Ժողովի.— Աղգ. Ժողովն երէկ (հոկտ. 23) գումարուեցաւ և կատարեց երկու ընտրութիւններ, որոնք աղգ. գործոց վարչութեան տեսակէտով որքան օգտակար, նոյնքան կարևոր էին:

Աճէմեան պէյ, ինչպէս խոստացաւ անցեալ նիստին, ժամը 7-ին բացաւ նիստը, հազիւ 30 երեսփոխանի ներկայութեան, և ձեռնարկեց ատենական գործողութեանց: Քիչ վերջը, երեսփոխանաց թիւն հասաւ 75-ի, և օրինաւոր հռչակուեցաւ նիստը:

Տ. Հմայեակ եպսկ. հրաժարած էր Օրմանեան Սրբազանի գործոց քննիչ յանձնաժողովին անդամակցութենէն, առարկելով իր ֆիզիքական տկարութիւնը, և պաշտօնին վերաբերեալ գործերը: Սրբազանն յատենի ժողովոյ ալ բերանացի կրկնեց իր հրաժարականը, սակայն ժողովը միաձայնութեամբ մերժեց, և ստիպեց ընդունել: Լ. Սաաթճեան էֆ. ըսաւ թէ յանձնաժողովը տարիէ մ'ի վեր կազմուած ըլլալով, փոխանակ արդիւնքի՝ հրաժարականներ նկատողութեան առնելու կհարկադրուի: Այս պատճառաւ չի կրնար ընդունուիլ, և պարտաւորեց անդամներն որ ներկայացնեն քննութեանց արդիւնքը:

Աղբամարի կողոպուտը.— Յետոյ կարդացուեցաւ Աղթամարայ յափշտակութեանց քննիչ յանձնաժողովոյ տեղեկագիրը, զոր ստորագրած էին Հմայեակ Արք., Գարեգին վարդ. և Շիրինեան էֆ.: Այս տեղեկագիրը կրտէ թէ խնդիրը քննութենէ անցուցած և տեսած է որ կացութիւնն հետեւեալն է.—

Աղթամարի կաթող. տեղապահ Արք. վարդ.-ի սպանութենէն ի վեր անպատասխանատու վիճակ մը տիրեր է Աթոռին մէջ: Աթոռին իրաւասութեան ենթարկուած 26 վանքեր աւարի և կողոպուտի ենթարկուելը են կուսակցականներու կողմէ, գլխաւորութեամբ Իշխան կոչուած ռուսահայոյ մը և իր մար-

դոց: Վանքերը գայթակղութեան և հակակղերական շարժման կեդրոն եղած են: Ասոնց պարագլուխը Իշխան ըլլալով, իրեն գործակից գտնուած է գանձակեցի Փաշա մահանուանեալ մէկը, և Յովսէփ Եպսկ. յսկամայս այս դաշնակցականներուն տրամադրութեան ներքե գտնուած է առանց համարձակութիւն ունենալու զեղծումները մասնանշելու: Իշխան իբրև իր ապարանքը գործածած է այս Աթոռը, անխստառօլանելի արարքներու տեղի տալով:

Յանձնաժողովն այս ամբաստանութեանց վրայ յսելով իրազեկ անձերու տեղեկութիւնները, և քննելով անկէ հասած գիրերը, յանգած է հետևեալ եզրակացութեան.— Կաթող. Տեղապահ Տ. Յովսէփ Եպսկ. ծերացած և տկարացած ըլլալով, կարգել անոր տեղ կարող և աշալուրջ եկեղեցական մը: Կարգել եկեղեցական և աշխարհական քննիչ մը, որպէս զի տեղւոյն վրայ քննէ խնդիրը, և որպէս զի քննիչ յանձնաժողովին գործը զիւրանայ, խնդրել կեդրոնական կառավարութեան օժանդակութիւնը: Վանքերն ազատել իրենց ենթարկուած արգի բռնութենէն, և ընտրել հոգաբարձութիւն մը որ հսկէ բոլոր վանքերուն վրայ: Վանքերուն կրթական գործն ստանձնելու համար ընտրել աշխարհական հոգաբարձութիւն մը: Հաստատել ձեմարան մը Աղթամարի Աթոռին մէջ, ողջամիտ և աղգանուէր եկեղեցականներ և ուսուցիչներ պատրաստելու համար: Աթոռին կից վանքերուն մէջ ալ հաստատել վարժարաններ ուրոյն ծրագիրներով՝ Կաթողիկոսական տեղապահին վերին հսկողութեան տակ: Վանքերը մէկ սնտուկ պիտի ունենան, ուրկէ պիտի ըլլայ մատակարարութիւնն հոգաբարձութեան միջոցաւ և հաւանութեամբ տեղապահին: Միաբանութեան անդամները կրնան ի հարկին պաշտօն վարել, և ամէն վանք պիտի ունենայ իր տեսուչը, տեղապահին անմիջական հսկողութեան տակ: Վանքերու միաբաններէն Աղթամարի կեդրոնին մէջ Կրօն. ժողով մը կազմել և կրօնի ու եկեղեցւոյ սէրն ընդարձակել Աղթամարի թեմօրէից մէջ: Գործածել այնպիսի ուսուցիչներ, որոնք ունենան վիպական բարի վարուց և հաւատարիմ գտնուին իրենց կոչման:

Նոյն ժողովուրմ ընտրուել են Բ. ատենապետ 62 քուէով Պարգև Էֆ. Փափագեան և Գ. ատենապետ՝ 23 քուէով Հրանտ Էֆ. Ասատուր:

Գաղ. ժող. համար 36 ձայնով ընդգէմ 16-ի ուղղելով, որ հին անդամներն էլ կարող են ընտրուել և նոր վարչութիւնը երկամեայ շրջան ունենայ, սկսուեց քուէարկութիւն, ընտրուեցին քուէներէ բացարձակ առաւելութեամբ

Մինաս էֆ. Չերազ	քուէ 65
Աշամ » Հալաճեան	» 42
Տոբթ. Սեղբոսեան էֆ.	» 41
Մանուկ էֆ. Աղսրեան	» 39
Համեմատական առաւելութեամբ	
Հմայեակ էֆ. Խոսրովեան	» 35
Բիւզանդ » Քէշեան	» 35
Յակոբ » Պահրի	» 28
Տոբթ. Վ. » Թորգոմեան	» 28
Ալիքոսան » Թօփալեան	» 27
Տոբթ. Ն. » Տաղաւարեան	» 27
Յակոբ » Էսայեան	» 27
Յակոբ » Պոյաճեան	» 26
Սարգիս » Սուին	» 22
Հայկ » Խօճասարեան	» 22

Ժողովը միաձայն մերժեց կրօնական ժողովի հրաժարականը:

Նոյն «Բիւզանդիան»-ում կարդում ենք.

Ռ՞զ պիտի ներկայացնէ Քաղաք. Ժողովը.—Կուրեան Արքայան խորհեր է որ՝ իր հրաժարականին առթիւ զրկուած նախարարական պատասխանագիրն ստացած ըլլալը, այլ սակայն պարունակութիւնն անբաւական գտած ըլլալը՝ մասնաւոր գրով մը, հաղորդէ կառավարութեան: Քաղաքական ժողովոյ ընտրութիւնն առիթ համարելով, այս ղեկուցումը պիտի ընէ այսօր, յայտնելով որ դատական նախարարութեան գիրը, ինչպէս իրեն, նոյնպէս Ազգ. ժողովոյ համար անգոհացուցիչ է, և որովհետեւ խնդիրն Ազգ. ժողովոյ կողմէ ստանձուած է, բանակցութեանց շարունակութեան պէտք տեսած պահուն, վարչութիւնն իր հրաժարականը բերաւ, հետևաբար Ազգ. ժողովը հարկադրուեցաւ նոր Քաղաք. ժողով ընտրել, որ պիտի շարունակէ հրաժարականին վերաբերեալ բանակցութիւնները, ուստի նորընտիր Քաղաք. ժողովին վաւերացումը կրննորէ:

Ազգ. ժողովն անցեալ նիստին խորհած էր, որ Պատրիարքարանի կնիքով ներկայացնէ նորընտիր Վարչութիւնը, սակայն այս շաբթու պէտք զգացած ըլլալով որ պատասխանագրին ստացումը ղեկուցանէ Վարչութիւնը, այս երկուքը միացնել աւելի յարմար գտաւեցաւ: Երէկ Ազգ. ժողովոյ մէջ խօսք չեղաւ այս մասին, սակայն Փոխանորդ հայրն ի տեղեկութիւն հաղորդեց զայս զիւանին:

Քաղաք. Ժողովոյ վաւերացումը.—Քաղաք. ժողովոյ պաշտօն-

նը վաւերացնող Գատական նախարարութեան պաշտօնագիրն երէկ հաղորդուեցաւ Պատրիարքարան և Յարաբերութեան դէլանի տեսուչ Կարապետ Էֆ. Խաչատուրեան անմիջապէս Ս. Պատրիարքին բնակարանը տարաւ: Ահաւասիկ այս քեզեքեքին թարգմանութիւնը:

«Կարգացի Ձեր Ամենապատուութեան քազրիրք, որով հնադորդէք թէ Պատրիարքական պաշտօնէ հրաժարելու մասին Վարչապետութեան յղած ձեր երկու քազրիրներուն մէջ ցոյց տրուած պատճառներուն և կացութեան մասին հաղորդուած կարգ մը բացատրութիւններ և հաւաստիքներ ու ձեր պաշտօնին ըստ առաջնոյն շարունակութեան մասին յայտնուած բազմանքներն անբաւական նկատուած են, և թէ Պատրիարքարանի Քաղաք. Ժողովն հրաժարած ըլլալով, ըստ օրինի ընտրուած են ուրիշներ, որոնց անունն հաղորդելով՝ իրենց պաշտօնին վաւերացումը կընդրէք:

«Ձեր հրաժարականին պատճառ ցոյց տուած վիճակին նկատմամբ նախապէս գրուած և բերանացի ու ամէն կերպով տրուած բացատրութիւններն և ներշնչուած վստահութիւնները կսպասուէր, որ բաւական ըլլային համոզում դոյացնելու կառավարութեան բարւոք և արդար մտադրութեանց վրայ, և մինչ կառավարութիւնն ասոր արդիւնքին և ձեր մասին ունեցած կատարեալ վստահութեան և բարւոք տրամադրութեան հետեանօք, յատկապէս կիսափառէր որ շարունակէք ձեր պաշտօնը, բնականաբար ցաւալի է որ ձեր դրութեան կերպը չհամապատասխաներ այս ակնկալութեան: Կյուսանք որ ձեր ծանօթ խոհականութեամբ և ձեռնհասութեամբ, եղած խոստումներն և խորհրդակցութիւնները դարձեալ նկատողութեան առնելով, հնաճիք ջնջել յառաջ եկած թիւրմացութիւնը: Հետեալբար ձեր ներկայացուցած ցուցակին մէջ անուններն յիշուած և Պատրիարքարանի օրէնքով իրենց պաշտօնը ճշտուած նորընտիր անդամներուն ընտրութիւնն ալ յարմար նկատուելով, այս պատասխանը դրուեցաւ»: Գաւական եւ կրօնից նախարար
Նեմեսքսից

Այս քազրիրք Գուրեան Ս. կարգալէ յետոյ, յարմար դատեց որ Քաղաք. Ժողովոյ անդամները վաղն իսկ, իսկ Խառն Ժողովը՝ ուրբաթ օր նիստ գումարեն: Պատրիարքարանէն այսօր Քաղաք. Ժողովոյ անդամներուն հրաւէր յայտի զրկուի:

Ժողովականներէն ոմանց հրաժարած չըլլալուն մասին կըստուի. սակայն մինչև որ հրաւէրները չուղղուին, բնականաբար չի կրնար հասկցուիլ թէ որոնք ստանձնած են, և թէ հրաժարողներ կո՞ն թէ ոչ:

* * * Գուրեան Սրբազան երէկ եցի Կազբայի խմբագրներն-
 րէն մէկուն հետ տեսակցելով, յայտներ է որ նոր Քաղ. ժողովի
 ընտրութիւնն իրաց վիճակը չփոխեր ընաւ, և թէ ինք տակա-
 ւին հրաժարեալ կմնայ, ու մինչև որ Ատանայի դէպքին պա-
 տասխանատուները չպատժուին, չի կրնար ընաւ վերադառնալ
 իր Աթոռը, և թէ ո՛ր և է պարագայի մէջ չպիտի հեռանայ այս
 մտադրութենէն: Գուրեան Ս. յայտներ է որ ինք փառասիրա-
 կան ձգտումներ չունենալով, փառքի համար իր պաշտօնը չի
 պահեր, և եթէ նորընտիր Քաղ. ժողովոյ Բ. Դրան հետ կատա-
 րած բանակցութեան հետևանօք կառավարութիւնն ազգին
 արդար պահանջումները ճանչնալով գոհացում տայ, այն ատեն
 իր հրաժարականն ետ պիտի առնէ, և Իսլամ ու Հայ տարըն-
 րուն միջև անկեղծ համերաշխութեան համար ամէն ջանք պիտի
 նուիրէ: Գուրեան Ս. ըսեր է նաև որ առանձնաշնորհմանց
 ինքըրոյն նկատմամբ յառաջիկային Բ. Դրան հետ բանակցու-
 թեան պիտի սկսի, և չի յուսար որ այդ մասին մեծ դժուա-
 րութիւն մը յառաջ գայ. Գուրեան Սրբազան դարձեալ Ատա-
 նայի դէպքին ակնարկելով, ըսեր է թէ երբ արդարութեան
 գործադրութիւնն յապաղի, բուն պատասխանատուներն և
 յանցաւորները մի առ մի փախչելու դիւրութիւն պիտի գտնեն
 և այս կերպով ատեն մը վերջ իրենցմէ հետք չգտնուելով,
 ինքըրոյն կարգադրութիւնը բոլորովին պիտի դժուարանայ:
 Գուրեան Սրբազան այս խօսքերով կակնարկէ Իհսան Ֆիլքրիի և
 Ապտիւլգասաէրի վերջին փախուստին, և տարակոյս չկայ որ իր
 կարծիքը ճիշտ է կատարելագէտ: Յանցաւորներուն փախուստը
 ինքըրոյն լուծումը չի կրնար ըլլալ:

Նոր Քաղաքական ժողովը.—Ս. Պատրիարք Հայրն երէկ
 նորընտիր Քաղաքական ժողովոյ անդամներուն ընտրութիւնը
 շնորհաւորելով, հրաւիրեց զանոնք այսօր առաջին նիստն ընե-
 լու Ալալաթիոյ Խորհրդարանին մէջ, և իրենց դիւանը կազմելու,
 և յառաջիկայ ուրբաթ օրն ալ Ազգ. ժողովոյ նիստէն առաջ
 Խառն ժողով կազմելու Կրօն. ժողովին հետ:

Հայ եկեղեցին Տաճկաստանում բացի վարչական կազմա-
 լուծումից տուժում էր ճնշուած հարստահարուած և հալա-
 ծանքի ենթակայ հայերի մասնակի կրօնափոխութեամբ: Այժմ
 Տաճկաստանի հայ թերթերը յայտնում են Ատանայի ազգային
 ազատուած հայերի խմբական կրօնափոխութեան ձգտումն,
 որի առաջը առնելու համար հարկաւոր աշխատանք գոր-

Ճաղըրում է Կ. Պօլսի կենդրոնական վարչութեան և Կիլիկիայի Սրբազան կաթողիկոսի կողմից: Այս առիթով «Արևելքում» կարգում ենք:

Հայերը օրօսոս կրկան.—Կիպրոսէն 9 սեպտ. թիւով կը հեռագրեն Ազգ. Պատրիարքարան թէ նոյն տեղը դանուող Ատանայի աղէտեալները, որոնք արդէն նախապէս որոշած էին դաւանաւիտս ըլլալ, սակայն Պատրիարքին և Մուշեղ եպիսկոպոսի յորդորներուն վրայ պահ մը ետ կեցած էին այդ արարքէն, այժմ վերջնականապէս որոշած են օրթօօօրս ըլլալ և մօտերս ռուս փօփ մը պիտի կանչեն, պաշտօնական ձևակերպութիւնները լրացնելու համար: Կիպրոսի մէջ դանուող Ատանացիները այս որոշումին իբր պատճառ ցոյց կուտան Ատանայի մէջ տիրող անապահովութիւնը, իրենց վերջին ծայր յուսահատիւր և Հայոց Պատրիարքին հրաժարականը:

Ամերիկայի «Հայրենիք» լրագրում կարգում ենք Հայոց պատրիարքական փոխանորդարանի հերքումն, թէ պատրիարքարանը երբէք շրջաբերական չէ տուել, որ թաղական խորհուրդները արգելեն «կուսակցական մարդիկներու միթինկներու սարքումը եկեղեցիներու և եկեղեցական հաստատութիւններու մէջ»:—Ուրեմն թոյլ է տալիս: Ահա այդ հերքումն.

Պատր. փոխանորդարան Հայոց.—Պօլս, 22 հոկտեմբեր

Խմբագրութիւն «Ազատամարտ» Որագրի: Ի գիտութիւն «Ազատամարտ»-ի խմբագրութեան կը փութանք յայտարարել թէ պատրիարքարանը երբէք մայրաքաղաքի բոլոր եկեղեցիներու Թողական խորհուրդներու հրահանգ չէ տւած, որ ասկէ վերջ չթոյլատրեն կուսակցական մարդիկներու միթինկներու սարքումը եկեղեցիներու և եկեղեցատարական հաստատութիւններու մէջ: Կը ցաւինք որ խմբագրութիւնդ պաշտօնական չեղած լուրի մը վրայ հիմնուելով և առանց կարծեցեալ շրջաբերականը անսած ըլլալու՝ կարգ մը գիտողութիւններ բրած էր պատրիարքարանի հասցէին: Կը վստահացնենք ձեզ թէ պատրիարքարանը ջերմ փափաքող և քաջալերող է ազգօգուտ գործոց մասին եղած բեմասացութեանց, միայն կը զգուշացնէ կրօնի և եկեղեցւոյ դէմ խօսողներու անպարէզ տւողները:

Ձեր Հայրենասիրութեան համակրող՝

Ղեւոնդ վարդ. Կուրեան

Մեզ մնում է զարմանալ: Եկեղեցին չի կարող «կուսակցական մարդիկներու միթինկներու» տեղ լինել:

Մասնակի և խմբական կրօնափոխութիւններէց ոչ պակաս ազետաբեր է Հայ եկեղեցու համար ազատամտական այն շարժումն, որ անկողար կերպով արտայայտուեմ է Տաճկաստանում որոշ խմբակի մէջ. — անաարբերութիւն դէպի կրօն, արհամարհանք դէպի եկեղեցին, վատնումն եկեղեցական սրբազան անօթներէ:

Կրօնի դատաւանդութիւնը ձգտում են բառնալ դպրոցներէց. եկեղեցիներում միախնդներ են կազմում, թոյլ տալով մինչև անգամ օտարազգիներին եկեղեցու սեղանից քաղաքական և ընկերավարական ճառեր խօսել. վանքերում ընտելուելով, վարում են այնպիսի կեանք, որ պակարակելի է մինչև անգամ աշխարհիկ կեանքում. վատնում են վանքերի գոյրերն ու կայքերը:

Այսպէս է Աղթամարայ և Վանի միւս վանքերում:

Կ. Պօլսոյ կենդրոնական վարչութիւնը վաղուց զբաղուեմ է այդ խնդիրներով. և տաճկահայ թերթերը ընդարձակ յօդուածներ են նուիրում այդ շարիքները նկարագրելով և շարիքի բարձման միջոցները ցոյց տալով:

«Արեւելք» լրագիրը ընդարձակ յօդուածներում քննում է կրօնի դատաւանդութիւնները բառնալու ձգտումն, իսկ Աղթամարայ վանքերի վիճակի մասին գրում է.

ԱՅԿՐՈՅՈՒՔԻԱՆ ԴԷՄ.— Երէկ, ժամը 6-ին, Մայր եկեղեցիի քահանաներու սենեակին մէջ տեղի ունեցաւ մայրաքաղաքիս քահանաներու ժողովը, յիսուսի մօտ անդամներու ներկայութեանը: Տաք վիճաբանութիւններ եղան վերջերս Աղթամարայ մէջ կարգ մը յեղափոխականներու կողմէ եղած աւարառութեանց մասին և թեր ու դէմ վիճաբանութիւններէ վերջ հետեալ նամակը խմբագրելով ներկայ ժողովական քահանաները ստորագրեցին և զրկեցին հրատարեալ Պատրիարքին, խնդրելով որ հրաման տայ յառաջիկայ հինգշաբթի փոխանորդ Տ. Աւսնդ վ.-ի ձեռամբ հրաւիրել Պօլսոյ բոլոր եղիսկոպոսները, վարդապետները ու քահանաները, այս մասին իրենց ձեռք առնելիք միջոցներուն վրայ խորհրդակցելու համար:

Ահաւասիկ այդ նամակը.

«Ստորագրեալ քահանաներս, ժողով դումարելով, նկատի առինք թէ Հայ առաքելական Ա. եկեղեցիին դէմ պայքար մը սկսած է դաւառներու մէջ և մեր լրագրութիւնը կը զբաղի այդ խնդրով: Նկատելով որ Աղթամարի աթոռին և Վասպուրականի վանքերուն գոյրերը աւարի արուելուն մասին բողոքներ կուգան Կեդր. Վարչութեան, նկատելով որ յաասուկ կու-

սակցութեան մը համար կըսուի թէ քրիստոնէական Ս. Արօնի հիմնական սկզբունքները քանդելու ամբաստանութեան ներքեւ կը դանուի և շատ մը կեդրոններէ բարոյականի ընդհանուր թուլացման կառավարողուի եղեր հայ ընտանեօնէր ժողովուրդը, յուշուեցանք և փափաքելով որ այսպիսի ծանրակշիռ խնդիրներու մասին ամբողջական դադափար մը և յարմար գործողութեանց խարխիս մը գտնուի, մտածեցինք զիմեւ Ձերդ Սրբազնութեան և խնդրել որ հաճիք յառաջիկայ եշ. Պատրիարքարան հրաւիրել մայրաքաղաքիս մէջ գտնուող բոլոր եկեղեցականները, որպէս զի համագումար ժողովի մը մէջ այս ծանր պարագաներուն մասին կատարեալ լուսարանութեան մը հասնինք, ի պաշտպանութիւն եկեղեցիին և պէտք եղած գործողութեանց ձեռնարկելու համար»:

Ս. Պատրիարքին հրաժարականի խնդիրը. — Հրաժարեալ Տ. Եղիշէ Ս. Պատրիարք շարաթ որ Դատական նախարարութեան զրկեց թագրիբ մը, սրուն թարգմանութիւնը նոյնութեամբ կհրատարակենք.

«Մանօթ պատճառներ և կացութիւններ ինձ յանձուած Պոլսոյ Պատրիարքական պաշտօնը պէտք եղած կերպով վարելու գծուարութիւն յարուցած և աւելի ճիշտն ըսելով՝ անկարելիութեան մասնած ըլլալով, հարկադրուած էի Սեպտեմբեր 25 թուականի և 325 թուահամար թագրիբով խնդրել վարչապետէն որ պատրիարքական պաշտօնէ զիս ազատ կացուցանելու կայսերական հրամանը շնորհուի» և տունս առանձնացած էի:

«Ի պատասխանի ինձ ուղղուած 27 Քամազան 327 թուականի և 2827 թուահամար նախարարական թէղքերէով մը կհաղորդուէր որ հրաժարականս Բ. Գոնէն մերժուած ըլլալով, հարկ է որ պաշտօնս շարունակեմ: Պաշտօնիս շարունակութեան մասին ձեր այս հրաւերին համար շնորհակալութիւն կյայտնեմք այց ինչ օրուա որ ձեր պատասխանագիրն անբաւական նկատուելով, գծուարութեան մասնուեցայ, հետևաբար պարտաւորուեցայ խնդիրն յանձնել ընդհ. ժողովին, որպէս զի խորհրդակցելով արդիւնքն և իր որոշումն հաղորդէ:

«Ընդհանուր ժողովը այս մասին Խառն ժողովին զեկուցումներ և հրահանգներ տուած պահուն նոյն ժողովին աշխարհական անդամներն իրենց հրաժարականը մատուցին:

«Հետևաբար, Խառն ժողովին վերաբերեալ գործերուն կարգադրութիւնն երեսի վրայ չմնալու և իմ հրաժարմանս առիթ եղող պատճառներն և բարձրագոյն մարմիններու եղած

գիմումները Բ. Գրան իրենց ընդ որ պարագաներով բացատրելու և ներկայացնելու ու որոշում ստանալու համար, որոշուեցաւ Քաղաքական Ժողովոյ նոր ընտրութիւն կատարել, հետևաբար ընտրութեան ձեռնարկուելով, ներկայեալ ցուցակին մէջ նշանակուած անձերը Քաղաքական Ժողովոյ անդամ ընտրուեցան:

«Նորընտիր անդամներն անմիջապէս իրենց պաշտօնին ձեռնարկելու համար, կը խնդրեմ որ սոյն ընտրութիւնն հաստատելու շնորհ ընէք»:

Հրատարեալ Պատրիարք Հայոց
Միգր. Արքեպիսկոպոս

Այս գիրը Գատական նախարարութեան ներկայացուելէ յետոյ Իգսամի խմբագիրներէն մէկն առիթ ունեցեր է տեսակցելու գատական նախարար Նէճմէտտին պէյի հետ, որ հետևեալ կերպով պատասխաներ է.

Խմբ. — Հայոց Պատրիարքարանէն այսօր Գատական նախարարութեան թագրիւր մը զրկուեցա՞ւ:

Նախ. — Պատրիարքարանի Ընդհ. Ժողովը, նոր Քաղաք. Ժողով մը ընտրած ըլլալով, Գուրեան Պատրիարք, նախարարութեան սեղաճ գրով մը ժողովականներու հաստատութիւնը ուղած է:

— Պատրիարքին հրատարականին ի պատասխան կառավարութեան Պատրիարքարան զրկած թէզքէրէին պէտք չէ՞ր որ պատասխանէր Պատրիարքը:

— Անշուշտ, ամէն պարագայի մէջ, կառավարութիւնը Գուրեան Ա-ի պատասխանագրին կսպասէ: Ճիշդն ըսելով, Իգսամի այս խնդրոյն նկատմամբ գրած քաջալերական տողերն և յօգուածները զանազան տարրերու միութեան կծառայեն և այս պատճառաւ վերին աստիճանի գնահատելի է: Մենք Պատրիարքին պատասխանը ստանալէ անմիջապէս վերջը, զինքը գոհացնելու համար ինչ որ մեր ձեռքէն կուգայ չպիտի զլանանք:

— Պատրիարքին հրատարման շարժառիթը և այս պատճառին համար կառավարութեան կարծիքն ի՞նչ է:

— Պատրիարքն Ատանայի դէպքին մէջ պատասխանատու եղողներու պէտք եղած կերպով չպատժուելը յայտնած և աւելցուցած էր թէ մինչև որ ասոնք խիստ կերպով չպատժուին, չի կրնար ազգին պետը կոչուել: Սակայն կհաւաստեմ ձեզ թէ կառավարութիւնն ոչ թէ պատրիարքական պահանջման վրայ, այլ սկզբունքով՝ օսմանցի հայերն այս երկրին ճշմարիտ զաւակները ճանչնալով և չուզելով որ անոնք ունենան անարդարութեան զոհ երթան, թէ՛ Ատանայի և թէ՛ ուրիշ տեղերու պատերազմատեաններուն կողմէ տրուած վճիռները քննութեան ենթար-

կած է: Պէտք է ապահով ըլլաք որ կառավարութիւնը, մեր հայ հայրենակիցները, այսինքն օսմանցիներու մէկ մասը գոհացնող միջոցները պիտի գործադրէ:

— Այս պարագային մէջ այս խնդիրը երբ և ինչ կերպով պիտի լուծուի:

— Կառավարութիւնն այս մէկ քանի օրուան մէջ Քաղ. ժողովոյ ընտրութիւնը վաւերացնելէ յետոյ, կ'կարծեմ թէ Դուբեան Սրբազան նորընտիր անգամներուն հետ խորհրդակցելով մեղի ընահանաբար պատասխան մը պիտի տայ, մենք ալ այն ատեն, ներկայ դժուարութիւնները բառնալու համար անպատճառ դարման մը պիտի մտածենք: Ամէն պարագայի մէջ, մեր հայ հայրենակիցները պիտի վստահ ըլլան սահմանադրական կառավարութեան արդարասէր զգացումներէն:

— Զրոյց կպտտի թէ Սասունի և Մուշի կողմերը կոտորած մը եղած է. ճիշտ է այս լուրը:

— Ինչաւ, այս զրոյցը իմ կողմէս կրնաք հերքել: Կառավարութիւնն Ատանայի վշտառիթ դէպքին ուրիշ ատեղ մը կրկնութիւնն արգիլելու համար կարելին գործադրելու մէջ չէ թերացած:

— Սոմ. հեռագրական գործակալութիւնը իմացուցած էր թէ զրոյց կայ որ դուք ընտրելի էք Երեսփ. ժողովոյ ատենապետութեան:

— Ինչաւ, ես ինքս այդպիսի նախագահութեան մը ընտրելի ցոյց չտուի, բայց եթէ երեսփոխանք զիս նախադահ ալ ընտրեն, իմ ներկայ զբաղումներս բաւական ըլլալով, չպիտի կրնամ ստանձնել նախագահութիւնը:

Կ. Պօլսից հեռագրում են «Баку» լրագրին Գիարբէքերի նահանգի Չնդուշ ականում քրդերի մի խումբը յարձակուել է Հայ եպիսկոպոսի տան վերայ: Հայերը ընդդիմադրել են: Երկու կողմերից սպանուած է մինչև 20 մարդ:

Նոյն «Баку» լրագրին դարձեալ Կ. Պօլսից հեռագրում են՝ Գիարբէքերի նահանգում բռնկել է յետադիմական շարժումն: Յետադիմականները սպանել են մի նշանաւոր հայի և յարձակուել են Հայ վանքերի վերայ: Ազգաբնակիչութիւնը սարսափի մէջ է:

Հայ օսարագաւան եկեղեցիներ.

Հրաժարուել է Կ. Պօլսոյ կաթողիկոսերի պատրիարք —

կաթուղիկօսը և հրաժարականը ընդունուել է Հռովմայ պապից. ուստի և Կ. Պօլսոյ հայ կաթուղիկ համայնքը պատրաստուում է նոր—պատրիարք—կաթուղիկօս ընտրել:



Հայ Հռովմէական գործեր.— Կառավարութիւնը պաշտօնապէս հաղորդեց Պատրիարքարան թէ Սապպաղեան Պատրիարքի հրաժարականն ընդունուած է և թէ նոր ընտրութեան հարկ է ձեռնարկել: Ընտրութենէն առաջ երևելեաց ժողովը պիտի հրաւիրուի, տեղապահ մը կարգելու համար, որ հաւանականաբար Գոյունեան եպոս.-ը պիտի ըլլայ քանի որ կաթող. տեղապահի տիտղոսով նշանակուած է արդէն Հռոմէն: Տեղապահի ընտրութենէն վերջ պիտի հրաւիրուին դաւառներու առաջնորդները պատրիարքական ընտրութիւն կատարելու:



Տկարութեան պատճառով հրաժարական է տուել Կ. Պօլսոյ հայ բողոքականների ժողովրդապետը

